ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ս. Օհանյան

3 փետրվարի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Եվրասիա միջազգային համալսարան՝ Արմինե Արկադյայի Հովսեփյանի՝ «Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունը վարչաիրավական հարաբերություններում» վերտառությամբ ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում հրապարակային պաշտպանությանը ներկայացված Արմինե Հովսեփյանի հետազոտությունը նվիրված է իրավունքի տեսության և մասնավորապես՝ վարչական իրավունքի գիտության հրատապ, արդիական և քիչ հետազոտված հարցերից մեկին: Այն վերաբերում է հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությանը՝ որպես պատշաճ վարչարարության գործընթացի: Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմինները կաշկանդված են երկու տեսակի իրավանորմերով. մի դեպքում՝ որոշակի փաստական հանգամանքներով պայմանավորված իրավական հետևանքի առաջացում, մյուս դեպքում՝ առկա է մի քանի իրավական հետևանքներից որևէ մեկն ընտրելու հայեցողական լիազորություն: Այս և այլ հարցերին հեղինակն անդրադարձել է ատենախոսությունում՝ նշելով վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կենտրոնական դերի մասին, ինչպես նաև այն դիտարկելով որպես խնդրահարույց ինստիտուտ: Արժևորելի է նաև այն, որ հայեցողական լիազորությունների իրավաչափության խնդիրը դիտարկվել է ոչ միայն որպես իրավական տեխնիկայի հարց, այլ որպես իրավական մշակույթի, վարչական գիտակցության և ինստիտուցիոնալ վստահության բաղադրիչ:

Ատենախոսությունը պատրաստված է գիտական պատշաճ մակարդակով, այն ինքնուրույն հետազոտության արդյունք է՝ պայմանավորված ձևավորման պահանջների հետևողական պահպանմամբ: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ ատենախոսության հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են գիտական հրապարակումներում և մենագրությունում:

Բովանդակային և կառուցվածքային առումով թեկնածուական ատենախոսությունը և նրա սեղմագիրը համապատասխանում են նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Ատենախոսությունը կազմում է 150 էջ, բաղկացած ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ըստ հեղինակի՝ հետազոտության նպատակն է բացահայտել վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորությունների կիրառման հիմնախնդիրների լուծումները՝

նշվածը պայմանավորելով դրանց կիրառման իրավաչափությամբ, սահմանների բնորոշմամբ և տարանջատմամբ՝ վեր հանելով նորմատիվ իրավական ակտերում և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները՝ ներկայացնելով հայեցողական լիազորությունների կիրառման վերաբերյալ վարչական մարմիններին ուղղորդող հայեցակարգեր, ընթացակարգեր և էլեկտրոնային ուղեցույցներ մշակելու անհրաժեշտությունը:

Առաջադրված նպատակին հասնելու և հետազոտությունը լիարժեք և գործնական դարձնելու համար հայեցողական լիազորությունների տարբեր հայեցակարգերի և համակարգերի ուսումնասիրության արդյունքում, անդրադարձ է կատարվել «հայեցողական լիազորություններ» եզրույթի ձևակերպմանը և իրավական կարգավորմանը:

Աշխատանքի դրական կողմերից մեկն այն է, որ հեղինակը փորձել է ներկայացնել ոչ միայն առկա գիտական և օրենսդրական կարգավորումները, այլ վերլուծության է ենթարկել հայեցողական լիազորություն տերմինի իրավաբանական և գործառնական նշանակությունը:

Ատենախոսության կառուցվածքը հեղինակին հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնել առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես՝ առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր և կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը հիմնականում հասել է իր առջև դրված նպատակներին, մասնավորապես՝ թեմային առնչվող հիմնախնդիրների ու հարցադրումների շրջանակում ներառված հարցերի գիտագործնական նշանակությանը, հետազոտության ժամանակակից վիճակին՝ պայմանավորված հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության շրջանակում վարչաիրավական հարաբերություններում նոր մոտեցումների և գիտականորեն հիմնավորված լուծումներ առաջադրելու կարևորությամբ: Պաշտպանությանը ներկայացված հիմնադրույթները, կարծում ենք, համապատասխանում են ներկայացվող պահանջներին՝ ինչպես նորույթի, այնպես էլ հիմնավորվածության չափանիշներով: Միաժամանակ, կարծում ենք, որ հեղինակի կատարած առանձին եզրահանգումներ խնդրահարույց են, սակայն դրանք բացառապես առնչվում են գիտական բանավեճի շրջանակներին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ այդ եզրահանգումները բխում են ատենախոսության տրամաբանությունից, համապատասխանում՝ առաջադրված նպատակներին և խնդիրներին, իսկ պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները ունեն գիտավերլուծական հիմնավորվածություն և գործնական նշանակություն:

Միևնույն ժամանակ, աշխատանքում տեղ են գտել դրույթներ, որոնց առնչությամբ կատարել ենք հետևյալ նկատառումները՝

1.ուսումնասիրելով գիտական նորույթի տեսանկյունից պաշտպանության ներկայացվող առաջին դրույթի շրջանակներում ներկայացված արդյունքները և չթերագնահատելով ատենախոսի հետազոտության ձգտումները՝ կարծում ենք, որ առաջարկվող դրույթով՝ այն, որ իրավակիրառ պրակտիկան սերտորեն փոխկապակցված է իրավական կարգավորման նորմատիվ համակարգին, որն էլ հիմք է վարչական մարմնի

համար իրականացնելու իրեն վերապահված հայեցողական լիազորությունները՝ ապահովելով մարդու ազատության իրավունքը և օրինական շահերը, պետական և հասարակական շահերը, այնուամենայնիվ անհրաժեշտ են որոշակի լրացուցիչ լուծումներ պաշտպանության ներկայացվող դրույթը լիարժեք դարձնելու համար:

2. Ուսումնասիրելով հայեցողական լիազորությունների և դրանց սահմանափակման հեղինակի կողմից առաջադրված սահմանումները՝ կարծում ենք, որ վերջինիս առաջարկը պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում կարող է ընդունելի և արդարացված լինել: Միևնույն ժամանակ, առավել արդյունավետ կլիներ, եթե հեղինակը այս հարցում կատարեր միջազգային փորձի լայն ուսումնասիրություն՝ հիմնավորելով իր կողմից առաջարկված «հայեցողական լիազորությունների կիրառումը սահմանափակելու» սկզբունքի սահմանումը:

3.Պաշտպանության ներկայացրած 4-րդ դրույթը վերնագրված է «Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության և վարչարարության հիմնարար սկզբունքների հարաբերակցության հիմնախնդիրները» վերտառությամբ, սակայն գովելի է այն հանգամանքը, որ հեղինակն անդրադարձ է կատարել նաև վարչական իրավունքի հիմնարար սկզբունքների միջև հնարավոր «կոնֆլիկտների» հաղթահարմանը՝ առաջարկելով հնարավոր լուծումներ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այն կարող էր նշվել վերնագրում և կատարել առավել համապարփակ ուսումնասիրություն:

4.Չվիճարկելով հեղինակի դիրքորոշումը հայեցողական լիազորությունների սահմանափակման բովանդակային բնութագրիչների վերաբերյալ՝ կարծում ենք, որպես պաշտպանության ենթակա դրույթ մասամբ է հիմնավորված, մասնավորապես՝ հայեցողական լիազորությունների սահմանափակման բովանդակային հատկանիշները, այն է՝ ազատ և իրավաչափ ընտրությունը, նպատակահարմարությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը գործնական ուղեցույց են ցանկացած վարչական մարմնի համար՝ վարչարարության իրավաչափ իրականացման հարցում, քանզի դրանցից յուրաքանչյուրը կարևորվում է կամայականության բացառման տեսանկյունից: Հեղինակը կարող էր ավելի համակողմանի վերլուծել նշված բնութագրիչները, ինչպես նաև անդրադառնալ այլ բնութագրիչների:

5. Պաշտպանության ներկայացվող 2-րդ և 3-րդ դրույթներն ամրագրում են հանրահայտ իրողություններ:

Աշխատության 9-րդ և 10-րդ էջերում հեղինակը նշում է, որ «Հետազոտելով հայեցողական լիազորությունների իրավական բովանդակությունն ու նշանակությունը, ինչպես նաև վերլուծելով վարչական օրենսդրության դրույթների արդյունքները հանգել ենք նրան, որ վարչական մարմինը օրենքով վերապահված հայեցողական լիազորությունները կիրառում է իրավաչափության սահմաններում՝ հարգելով և պաշտպանելով մարդու իրավունքներն ու ազատությունները, իրավահավասարությունը՝ ապահովելով վարչարարության օբյեկտիվությունը:»: Նշվածն, ըստ էության, օրենսդրական պահանջի իրագործում է:

Շարունակելով իր միտքը՝ հեղինակը նշում է, որ «Հայեցողական լիազորությունը համարվում է վարչական մարմնին տրված ազատություն՝ իրականացնելու հայեցողական

լիազորությունների կիրառմամբ իրավաչափ վարչարարություն, մինչդեռ հայեցողական լիազորությունները սահմանափակելու սկզբունքն իմաստային առումով ենթադրում է հայեցողական լիազորությունների ամբողջական սահմանափակում՝ ստեղծելով «արհեստական զսպվածություն» վարչական մարմնի համար, իսկ ձևական իրավական առումով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունների սահմանափակումը բնորոշվում է որպես վարչական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանց կիրառման իրավաբանական անհնարինություն:»: Սա, ըստ էության, հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքի գաղափարի կրկնություն է:

Ըստ այդմ, անհասկանալի է, թե ինչում է դրսևորվում պաշտպանության ներկայացվող դրույթը:

Պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում հեղինակը նշում է. «Անդրադառնալով վարչարարության սկզբունքները բնութագրող՝ միմյանց հետ փոխկապակցված և փոխլրացնող հատկանիշների իրավական բովանդակության կարևորությանը և դրանց փոխգործակցության հիմնախնդիրներին, աշխատանքում հիմնավորվել են վարչական իրավունքի սկզբունքների էության բացահայտման անհրաժեշտությունը և միմյանց հետ հարաբերակցությունը՝ կարևորելով օրենսդրական կարգավորման ու վարչական գործունեության միասնական մոտեցումների մշակման նպատակահարմարությունը: Սկզբունքների գոյությունը վարչական մարմնին հնարավորություն է տալիս իրականացնել իրավաչափ վարչարարություն, նույնիսկ եթե որևէ հստակ իրավական նորմ առկա չէ, որը կկարգավորեր վիճահարույց իրավիճակը: Վարչարարության սկզբունքները մի կողմից արտացոլում են օբյեկտիվ իրականությունը, իսկ մյուս կողմից դրանցից յուրաքանչյուրը գաղափար է, սուբյեկտիվ մոտեցում, որը չափվում է նաև վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձի ընդհանուր և մասնագիտական գիտելիքների մակարդակով: Վարչական մարմնի պաշտոնատար անձը, կարևորելով մարդու իրավունքները և ազատությունները, պետք է առաջնորդվի ոչ միայն այդ պահին կիրառման ենթակա սկզբունքի պահպանմամբ, այլ այդ սկզբունքն առնչակցի մյուս սկզբունքների հետ՝ ցուցաբերելով հետևողականություն ցանկացած սկզբունքի չխախտման հարցում:»:

Նշվածի վերաբերյալ նորույթի մասով լրացուցիչ պարզաբանման կարիք է զգացվում:

6. Եզրակացության 8-րդ կետի 3-րդ ենթակետում հեղինակն առաջարկում է դատական և վարչական մարմինների միջև փորձի փոխանակում, սակայն արդյոք դատարանը մայրցամաքային իրավական համակարգում նույնիսկ, եթե ստեղծում է նախադեպ կարող է ներգրավվել այլ՝ գործադիր իշխանության գործառույթների կատարելագործման գործընթացում: Այստեղ դրական է հեղինակի համարձակ փորձը վարչական արդարադատության տեսանկյունից դատարանին որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորի դերի բարձրացումը:

7. Կոռուպցիայի ծագումը վարչական մարմիններում պայմանավորված է նրանց վերապահված հայեցողական լիազորությունների ոչ իրավաչափ կիրառմամբ, ոչ պատշաճ վարչարարության իրականացմամբ, պաշտոնատար անձի կոռուպցիոն նպատակների

հետապնդմամբ, հասարակության նկատմամբ ցածր պատասխանատվությամբ, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է սուբյեկտիվ վարչարարության հիմք: Ցանկացած կոռուպցիոն գործոնի դրսևորման դեպքում պետք է բացահայտվի դրա կիրառման իրական նպատակը: Կոռուպցիայի դեմ պայքարը դրսևորվում է պետության, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության, կազմակերպությունների և անհատների գործունեությամբ՝ իրենց լիազորությունների սահմաններում:

Անդրադառնալով հեղինակի վերոգրյալ 5-րդ դրույթին՝ հայեցողական լիազորությունների կիրառումը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի առաջացման գործոն, հիմնավորվել է հայեցողական լիազորությունների երկակի բնույթը՝ դիտարկելով այն որպես արդյունավետ կառավարման գործիք և կոռուպցիայի հիմք: Հեղինակի կողմից ներկայացված հիմնավորումներն ընդունելի են, սակայն այս դրույթն առավել հիմնավոր դարձնելու համար վերջինս կարող էր մի շարք այլ մեխանիզմներ առաջարկեր կոռուպցիայի դեմ պայքարում:

Այնուամենայնիվ, ատենախոսությունն ամբողջական հետազոտություն է, որն ունի տեսական արժեք, ինչպես նաև գործնական նշանակություն: Ինչ վերաբերում է ատենախոսության պաշտպանության ներկայացվող հիմնարար դրույթների վերաբերյալ վերոգրյալ դիտողություններին, ապա դրանք ունեն մասնակի բնույթ և չեն արժեզրկում ատենախոսության գիտական արժեքը և ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա, քանզի աշխատանքը բնութագրվում է հետազոտման անհրաժեշտ մակարդակով, հիմնախնդիրներին համակարգված մոտեցմամբ:

Եզրակացություն. Արմինե Արկադյայի Հովսեփյանի' «Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունը վարչաիրավական հարաբերություններում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ավարտուն, գիտական նորույթ պարունակող ամբողջական հետազոտություն է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք - (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Գրախոսվող ատենախոսությունը քննարկվել է Եվրասիա միջազգային համալսարանի «Իրավագիտության» ամբիոնի 2026 թվականի փետրվարի 3-ի նիստում, որին ներկա էին՝ ամբիոնի վարիչ ի.գ.թ. Ա.Խվորոստյանկինան, վարիչի տեղակալ Ն.Ջոմարդյանը, օգնական Ա. Սարգսյանը, դասախոսներ՝ ի.գ.թ. Զ.Ապրեսյանը, ի.գ.թ. Հ.Մկրտչյանը, ի.գ.թ., դոցենտ Ա.Այվազյանը, ի.գ.թ., դոցենտ Հ. Պետրոսյանը, ի.գ.թ., դոցենտ Գ.Իսրայելյանը, ի.գ.թ. Մ.Հակոբյանը, ի.գ.թ. Ն.Աքիլյանը, փ.գ.թ. Ե.Մանուկյանը, Մ.Շահբազյանը, Ք.Մինասյանը: Լ. Թևոսյանը:

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ **Ն.Ջոմարդյան**